ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1964 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1963 թ. դեկտեմբերի 23—25-ը տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված ակադեմիայի ստեղծման 20-ամյակին։

Ժողովին մասնակցում էին գիտնականներ, բազմաթիվ գիտահետազոտական հիմնարկների աշխատողներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների պրոֆեսորներ, դասախոսներ, մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ։

Բացելով ընդհանուր ժողովը ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը ասաց.

—20 տարի առաջ, 1943 թ. նոյեմբերին, Հայրենական մեծ պատերազմի ծանր օրերին, ՍՍՌՄ Ժողկոմխորհի որոշմամբ հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան։ Ակադեմիայի ստեղծումը հանդիսանում է ազգային գիտության, կուլտուրայի և տեխնիկայի զարգացման, Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության հետագա ծաղկման նկատմամբ մեր կուսակցության ու կառավարության կողմից ցուցաբերած հոգատարության վկայությունը։

Անցած երկու տասնամյակներում ակադեմիայի սիստեմում կազմակերպվել են նորագույն տեխնիկայով հագեցված մի շարք գիտա-հետազոտական ինստիտուտներ և լաբորատորիաներ, որոնք ունեն գիտատեխնիկական հարուստ բազա և լավագույն կադրեր։

Այսօր,—ասաց նա,—մենք խոր հարգանքով ենք հիշում հայագիտության այնպիսի կլասիկների, ինչպիսիք են Հրաչյա Աճառյանը, Հակոբ Մանանդյանը և հանրապետության ուրիշ հնագույն գիտնականներ, որոնք մտնում էին ակադեմիայի առաջին կազմի մեջ և ջանք չէին խնայում հայրենական գիտության զարգացման համար։

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, այնուհետև, խոսեց մեր հանրապետության գիտական կենտրոնի նվաճումների, նրա առջև դրված նոր խնդիրների մասին։ Նա նշեց, որ ներկայումս ավելի մեծ ու պատվավոր խնդիրներ են դրված գիտնականների առջև։ Առաջին հերթին անհրաժեշտ է զարգացնել գիտության հիմնական, ինչպես և երիտասարդ, հեռանկարային ճյուղերը, ավելի ամուր կապ հաստատել արտադրության, ժողովրդական տնտեսության հետ։

Խոսելով ՍՄԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան պլենումի որոշումների մասին, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը Հայաստանի գիտնականների առջև խնդիր դրեց՝ հայտնագործություններով ու նորամուծություններով օգնել հանրապետության գյուղատնտեսության և արդյունաբերության բնագավառի աշխատողներին և միացյալ ջանքերով լուծել քիմիայի զարգացման խնդիրները։

Ընդհանուր ժողովը լսեց մի շարք զեկուցումներ։ «Գալակտիկաների կորիզները և նրանց ակտիվությունը» թեմայով հանդես եկավ ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, որը ժողովի մասնակիցներին հաղորդեց տարիներ շարունակ Բյուրականի աստղադիտարանում կատարվող հետազոտական աշխատանքների արդյունքները՝ գալակտիկաների և նրանց կորիզների կառուցվածքի մասին։ Հայ աստղագետները մշակում են գալակտիկաների միջուկներում տեղի ունեցող ֆիզիկական պրոցեսների տեսությունը։ Զեկուցման ընթացքում ցուցադրվեցին Բյուրականի աստղադիտարանի աշխատողների, ինչպես նաև ուրիշ աստղագետների կողմից լուսանկարված գալակտիկաներ։

Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի զեկուցումը նվիրված էր «Կովկաս աքսորված դեկաբրիստների մասին» թեմային։ Նա հաղորդեց այն նոր տվյալները, որոնք տարիների ընթացքում ի հայտ է բերել երկրի մի շարք քաղաքների արխիվներում։

Ժողովի մասնակիցները հետաքրքրությամբ լսեցին նաև ակադեմիկոս Մ. Ջրբաշյանի՝ «Հետազոտություններ միարժեք անալիտիկ ֆունկցիաների ներկայացման տեսության շուրջը», ակադեմիկոս Մ. Տեր-Կարապետյանի՝ «Միկրոօրգանիզմների կողմից ամինաթթուների և սպիտակուցների սինթեզման պրոբլեմները», ակադեմիկոս Գ. Դավթյանի՝ «Հողի տիպերը և նրանց քիմիացման պրոբլեմները», ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Սիմոնովի՝ «Հայաստանի թթթև լցուկները և նրանց օգտագործման հեռանկարները», ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Խաչիկյանի՝ «XVII դարի հայ վաճառական Հովհաննես Ջուղայեցու հաշվեմատյանը, որպես կարևոր

աղբյուր Հնդկաստանի, Նեպալի և Տիբեթի տնտեսական կյանքն ուսումնասիրելու համար» զեկուցումները։

Ընդհանուր ժողովում ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանը ընթերցեց ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Մ. Վ. Կելդիշի ողջույնի հեռագիրը՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի 20-ամյակի կապակցությամբ։

Ընդհանուր ժողովը լսեց նաև կազմակերպչական հարցեր։ Փոփոխություններ մտցրեց ակադեմիայի կառուցվածքում։ Նախկինում գոյություն ունեցող չորս բաժանմունքի փոխարեն ստեղծվեց հինգ բաժանմունք։ Քիմիական գիտությունը ռեսպուբլիկայում արագ թափով առաջ տանելու համար ստեղծվեց քիմիական գիտությունների բաժանմունք, որի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց Ա. Մնջոյանը։ Վերակառուցման կարգով ստեղծվեցին նաև ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական գիտությունների բաժանմունք (ակադեմիկոս-քարտուղար Մ. Ջրբաշյան) և Երկրի մասին գիտության բաժանմունք (ակադեմիկոս-քարտուղար Հ. Մաղաքյան)։

Ակադեմիայի ընդհանուր ժողովին մասնակցում էին Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ, ակադեմիկոս Ն. Հարությունյանը, Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի երկրորդ քարտուղար Հովհ. Բաղդասարյանը։

Ա. Ս.